# Հայրիկ, Հայրիկ / Hayrik, Hayrik

խոսք՝ Մ. Ջանիկյան
lyrics: M. Janikyan




1. Հայրի՜կ, Հայրի՜կ, քո հայրենիք՝
   Վասպուրական մեր աշխարհ,
   Վարդի փոխան քեզ փուշ բերավ,
   Ցավերդ դառան բյուր, հազար:

2. Մայիսն եկավ սոխակներով,
   Վարդի մի թուփ որոնեց,
   Փոխան թփի մացառ գտավ,
   Լալահառաչ ձայն հանեց:

3. Հայրիկն ասաց. “Իմ հայրենյաց
   Փուշն անուշ է, քան ըզվարդ,
   Ես այն փշոց մեջը դարձյալ
   Կը որոնեմ սիրուն վարդ:

4. Այն սայրասուր փշերն ամեն
   Փունջ կապեցեք շար ի շար,
   Թողեք ճակտիս պսակ հյուսեմ,
   Որին ճակատս է հոժար”:

5. Հայրի՜կ, Հայրի՜կ, քո սուրբ ճակտին
   Արյուն-արցունք է, ո՜հ, արդ,
   Փթթյալ վարդից կարմիր թերթեր
   Կպսակին փառոք զարդ:

1. Hayrik, Hayrik, k'o hayrenik'
   Vaspurakan mer ashkhar,
   Vart'i p'okhan k'ez p'ush berav,
   Ts'avert darran byur, hazar.

2. Mayisn yekav sokhaknerov,
   Vart'i mi t'up' voronets',
   P'okhan t'əp'i mats'arr gətav,
   Lalaharrach' dzayn hanets'.

3. Hayrikn asats': "Im hayrenyats'
   P'ushn anush e, k'an əzvart',
   Yes ayn p'əshots' mech'ə darts'yal
   Kə voronem sirun vart'.

4. Ayn sayrasur p'əshern amen
   P'unj kapets'ek' shar i shar,
   T'oghek' chaktis pəsak hyusem,
   Vorin chakats e hozhar".

5. Hayrik, Hayrik, k'o surp' chaktin
   Aryun-arts'unk' e, voh, ard,
   P'ət't'yal vart'its' karmir t'ert'er
   Kəpəsakin p'arrok' zart'.